ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.03.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 20/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի 25.02.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-20/16 բողոք), ի լրումն բողոքի 04.03.2016թ. ներկայացված գրությունը և կից փաստաթղթերը, «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի 09.03.2016թ. թիվ 01/34 գրությունը և կից փաստաթղթերը, «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և ԳԲԽ-20/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 11.03.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 25.02.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և ներկայացրել է իր հայտը: Գնման առարկա է հանդիսանում «սննդամթերքը»:

«Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված Ընթացակարգի հայտերի բացման նիստն իրականացվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի խախտմամբ, մասնավորապես նիստ չի անցկացվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահողը չի հայտարարել նիստի բացումը, գնման առարկայի ընդհանուր գինը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը առաջարկել է մասնակիցներին չմասնակցել նիստին, գնային առաջարկները պատճենահանել և խոստացել է էլեկտրոնային տարբերակով ուղարկել հայտերի բացման նիստի արձանագրությունը, սակայն վերոնշյալ արձանագրությունը ոչ ուղարկվել է էլեկտրոնային տարբերակով, քանի որ Ընկերությունը ներկա չի գտնվել նիստին, և ոչ էլ հրապարակվել է գնումների տեղեկատու կայքում, այսինքն խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասը և Կարգի 47.1-րդ կետը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի հավաստմամբ՝ Պատվիրատուն չունի սահմանված նախահաշվային գներ, ուստի խախտվել է Կարգի 23-րդ կետի «ե» ենթակետը, որի համաձայն՝ Պատվիրատուն գնման հայտը կազմելիս՝ արդեն պետք է ունենար մեկ միավորի համար նախատեսված առավելագույն գին:

Վերոնշյալ խախտումների հետևանքով (նախահաշվային գին չունենալու պատճառով) Ընկերության Ընթացակարգի հայտերի բացման նիստից 1 օր անց ուղարկվել է ծանուցում՝ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, սակայն չի ուղարկվել ծանուցում նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն (նախահաշվային գնից 75 % ցածր գին ներկայացնելու համար հիմնավորում):

Ընկերությունը նշել է նաև, որ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1, 2, 4 և 27-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկները տեխնիկական վրիպակի պատճառով սխալ գին են պարունակում, այդ իսկ պատճառով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը Ընկերության կողմից չեն ներկայացվել «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով գնման ընթացակարգը բողոքարկելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է չկայացած հայտարարել «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով «Փոքր Միեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը, ի լրումն 25.02.2016թ. ներկայացված բողոքի, 04.03.2016թ. գրությամբ խնդրել է դադարեցնել «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով գնման ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

2. «Փոքր Միեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Փոքր Միեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.03.2016թ. թիվ 01/34 գրությամբ ներկայացրել է «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի բացման նիստը, որը տեղի է ունեցել 09.02.2016թ. ժամը 12:00-ին, կազմակերպվել է Օրենքին և Կարգին համապատասխան, որի հավաստման համար Պատվիրատուն առաջարկել է ԳԲԽ-20/16 բողոքը քննող հանձնաժողովի հաջորդ նիստին հրավիրել բացման նիստին ներկա գտնված մասնակիցներին:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը չի հայտարարվել, քանի որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով հայտերի բացման նիստի արձանագրությունը չի ուղարկվել, քանի որ Ընկերության լիազոր ներկայացուցիչը ներկա է գտնվել նիստին, այնինչ բողոքում նշված է, որ Ընկերությունը ներկա չի գտնվել հայտերի բացման նիստին:

Պատվիրատուն նշել է, որ «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է համապատասխան իրավասու մարմին, քանի որ Պատվիրատուն չունի գնման հետ կապված փաստաթղթերը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակելու իրավասություն:

Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության բողոքը անհիմն է:

3. ԳԲԽ-20/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-20/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կողմից «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կողմից «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը:

3. «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կողմից «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՓՄԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/2» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 09.02.2016թ. հայտ է ներկայացրել:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրությամբ «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին, 2-րդ, 4-րդ, 17-րդ, 27-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով:

5. «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ իրենց կողմից ներկայացված 1, 2, 4 և 27-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկը տեխնիկական վրիպակի պատճառով սխալ գին է պարունակում:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հայտերի բացման նիստին հայտ ներկայացրած մասնակիցներից մասնակցում էին Ա/Ձ Հակոբ Մաշադյանի, Ա/Ձ Կարեն Սարգսյանի, Ա/Ձ Սարգիս Դովլաթյանի, «ՀՈՒՅՍ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի, ***«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի***, «Ֆոտոն» ՍՊԸ-ի, «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

7. «Փոքր Միեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ը 29.02.2016թ. թիվ 01/20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, թե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա, Պատվիրատուն, մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելն, իրավունք ունի կազմակերպել գնման ընթացակարգ, թե ոչ:

Միաժամանակ Պատվիրատուն խնդրել է պարզաբանում տալ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա գնման ընթացակարգ կազմակերպելու դեպքում Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառման վերաբերյալ:

8. Ի պատասխան Պատվիրատուի 29.02.2016թ. թիվ 01/20 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.03.2016թ. թիվ 1/73-1/7738-16 գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, նույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Վերոգրյալով պայմանավորված ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ը կարող է կազմակերպել գնման գործընթաց Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, եթե առկա է նույն մասի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված հիմքերից որևէ մեկը:

Ինչ վերաբերում է Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառման, ապա ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ այն կիրառելի չէ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով իրականացվող գնման գործընթացների դեպքում, քանի որ տվյալ դեպքում առկա չէ գնման առարկայի նախահաշվային, հետևաբար նաև գնման հայտով նախատեսված առավելագույն գին:

4. ԳԲԽ-20/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ուսումնասիրելով «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի 25.02.2016թ. ներկայացրած բողոքը, ի լրումն բողոքի 04.03.2016թ. ներկայացված գրությունը, Պատվիրատուի 09.03.2016թ. թիվ 01/34 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2016թ. թիվ 1/73-1/7738-16 գրությունը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 2 արձանագրությունը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը

լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության

պատճենները տրամադրվում են ***<u>այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:</u>***

Կարգի 29-րդ կետի 5-րդ ենթակետը սահմանում է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերը սղագրվում կամ տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և ***<u>արձանագրվում են</u>***, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը սահմանում է, որ բացառությամբ նույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ ***կազմում և հասրատրում է գնման հայտը, որը ներառում է՝ գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:***

Կարգի 47.1-րդ կետի համաձայն՝ մրցակցային, ինչպես նաև նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերություններով նախատեսված հիմքերով գնման գործընթացների կազմակերպման դեպքում քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե

առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: **Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:**

ՀՀ ֆինանսների նախարարի 21.12.2012թ. «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման կարգը հաստատելու մասին» N 1153-Ն հրամանի հավելվածով հաստատված «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման կարգ»-ի 2-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ նույն կարգով նախատեսված տեղեկատվությունը գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակում է հետևյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները հրապարակում են իրենց ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ու պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների գնումների մասով հրապարակման ենթակա տեղեկատվությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հայտերի բացման նիստին հայտ ներկայացրած մասնակիցներից մասնակցում էին Ա/Ձ Հակոբ Մաշադյանի, Ա/Ձ Կարեն Սարգսյանի, Ա/Ձ Սարգիս Դովլաթյանի, «ՀՈՒՅՍ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի, ***«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի***, «Ֆոտոն» ՍՊԸ-ի, «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրման եղանակը հանդիսանում է գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, ուստի Խորհուրդը հիմք է ընդունում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 2 արձանագրությունը,

համաձայն որի՝ Ընթացակարգի հայտերի բացման 09.02.2016թ. ժամը 12:00-ի նիստին ներկա է գտնվել նաև «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Ընկերությունը իր բողոքի մեջ վկայակոչել է այն հանգամանքը, որ իր ներկայացուցիչը ներկա չի գտնվել Ընթացակարգի հայտերի բացման նիստին, սակայն Խորհուրդը արձանագրում է, որ Ընկերությունը չի ներկայացրել որևէ ապացույց, որը հիմնավորում է Ընկերության կողմից նշված հանգամանքը, մինչդեռ Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ բողոքում բացի փաստացի և իրավական հիմքերից ներառվում են նաև ապացույցները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհուրդը, ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2016թ. ժամը 12:00-ի թիվ 2 արձանագրությունը, պարզել է, որ Ընկերության ներկայացուցիչը ներկա է գտնվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2016թ. ժամը 12:00-ի նիստին, ուստի Խորհուրդը գտնում է, որ քանի որ Օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին, ուստի «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի ներկայացուցիչների վկայակոչված նիստին ներկա գտնվելու պայմաններում Պատվիրատուի կողմից չեն խախտվել Օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:

Ինչ վերաբերում է հայտերի բացման նիստի արձանագրությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակելուն, ապա Խորհուրդը արձանագրում է, որ համաձայն Կենտրոնին ուղղված Պատվիրատուի 09.03.2016թ. թիվ 01/34 գրության՝ Պատվիրատուն չունի www.gnumner.am համացանցային կայքում հրապարակելու իրավասություն, քանի որ Պատվիրատուի՝ գնման հետ կապված փաստաթղթերը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, ուստի հայտերի բացման նիստի արձանագրությունը Պատվիրատուի կողմից ուղարկվել է լիազոր մարմնին (ՀՀ կրթության և գիտության նախարարություն) www.gnumner.am համացանցային կայքում հրապարակելու համար:

Ընկերության կողմից Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման կապակցությամբ Խորհուրդը հայտնում է, որ «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ը 29.02.2016թ. թիվ 01/20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանում տալ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա գնման ընթացակարգ կազմակերպելու դեպքում Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառման վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ին ուղղված 01.03.2016թ. թիվ 1/73-1/7738-16 գրությամբ հայտնել է, որ ***Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը կիրառելի չէ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով իրականացվող գնման գործընթացների դեպքում, քանի որ տվյալ դեպքում առկա չէ գնման առարկայի նախահաշվային, հետևաբար նաև գնման հայտով նախատեսված առավելագույն գին:***

Պատվիրատուի կողմից սահմանված պատասխանատու ստորաբաժանման 27.01.2016թ. նիստի արձանագրության համաձայն՝ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի **14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա**:

Պատվիրատուի կողմից սահմանված պատասխանատու ստորաբաժանման կողմից 27.01.2016թ. հաստատված գնման հայտով սահմանվել է գնման առարկայի պահանջվող ծավալը և չի սահմանվել մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը «Փոքր Մեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ին ուղղված 01.03.2016թ. թիվ 1/73-1/7738-16 գրությամբ հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը կիրառելի չէ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով իրականացվող գնման գործընթացների դեպքում, քանի որ տվյալ դեպքում առկա չէ գնման առարկայի նախահաշվային, հետևաբար նաև գնման հայտով նախատեսված առավելագույն գին, ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն չկիրառելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթները, գործել է իրավաչափ:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ Խորհուրդը գտնում է, Պատվիրատուն չի խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, հետևաբար «Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի կողմից 25.02.2016թ. բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի 25.02.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Մարտիրոսյան Հարություն**

Վարդանյան Սեդրակ